



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE

**PHCR**  
Primary Healthcare Reform Project

# ԲՈՒԺՇԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԱՐԱՐԱՏԻ, ԱՐՄԱՎԻՐԻ ԵՎ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԵՐԻ ԱԱԴ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ  
ԲՈՒԺՇԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2008



Մայիս, 2010 թ.

ՎԵՐԱՊԱՅՈՒՄ

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Սույն հրապարակման մեջ հեղինակի արտահայտած կարծիքները պարտադիր չէ, որ արտացոլեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

# ԲՈՒԺՅԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՈՒՄ

ԱՐՄԱԿԻՐԻ, ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԵՐԻ ԱԱՊ  
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԲՈՒԺՅԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԳՆԱՅԱՏՈՒՄ

2008

# Նախաբան

Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների (ԱՄԲ) ծրագիրը Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից ֆինանսավորվող հնգամյա (2005-2010թթ.) ծրագիր է, որն իրականացվում է «Էներջինգ Մարկեթս Գրուպ» (ԷՄԳ) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2005թ. սեպտեմբերին շնորհված պայմանագրով: Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել առողջության առաջնային պահպանման (ԱՄՊ) կայուն և բարձրորակ ծառայությունների սպառմանը՝ ի նպաստ հայ ընտանիքների առողջության բարելավման: Այս նպատակն իրականացվում է՝ աջակցելով Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարությանը (ՀՀ ԱՆ) ներդնել փաթեթ՝ կազմված վեց միջոցառումներից, որոնք առողջապահական բարեփոխումները կապակցում են ծառայությունների մատուցման հետ այնպես, որ մեկը մյուսին լրացնելով՝ ստեղծեն սիներգիկ արդյունք: Նշված վեց միջոցառումները ներառում են հետևյալը՝ աջակցություն առողջապահական բարեփոխումներին և քաղաքականությանը (այս միջոցառման բաղկացուցիչ մասն է բուժհաստատությունների վերանորոգումը և սարքավորումներով հագեցումը), ազատ հավաքագրում, ընտանեկան բժշկություն, բուժօգնության որակի բարձրացում, առողջապահության ֆինանսավորման բարելավում ու բնակչության ուսուցում, առողջության խթանում և հիվանդությունների կանխարգելում:

Ինչպիսի՞ ներգործություն են ունենում այս միջոցառումները. սա հաճախ հնչող, սակայն հազվադեպ ֆինանսավորվող հարց է: Բարեբախտաբար, ԱՄԲ ծրագիրը ներդրել է մի գործընթաց, որը պատասխանում է «ներգործության» հարցին. մշակվել է վեց հարցաշարերից բաղկացած մի փաթեթ՝ ծրագրի առաջընթացը վերահսկելու և արդյունքները գնահատելու նպատակով: Այս հարցաշարերից 3-ն ուղղված են բուժհաստատությունների գնահատմանը և նախատեսված են նախա- և հետծրագրային գնահատման մեթոդաբանության միջոցով ծրագրի ներգործության գնահատման համար ԱՄՊ 164 հաստատություններում և դրանց վերադաս բուժհաստատություններում: Մյուս երեք հարցաշարերը նախատեսված են Հայաստանի բնակչության շրջանում տեղի ունեցող փոփոխությունների գնահատման համար՝ կիրառելով նույն նախա- և հետծրագրային գնահատման մեթոդաբանությունը:

Սույն հաշվետվությունն ամփոփում է Արմավիրի, Արարատի և Արագածոտնի մարզերի (3-1 գոտի) նպատակային ԱՄՊ բուժհաստատությունների կարողությունների ելակետային գնահատումը: Այս գնահատման արդյունքները կարող են կիրառվել ներքին պլանավորման համար: Դրանք նաև համեմատությունների հիմք են հանդիսանում 3-1 գոտու բուժհաստատություններում ծրագրի ազդեցության հետագա գնահատման համար:

Հայաստանի ամերիկյան համալսարանի Առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոնը (ԱԾՀԶԿ), որը հանդիսանում է ԷՄԳ ենթակապալառուներից մեկը, ստանձնել է ԱՄԲ ծրագրի մոնիտորինգի և գնահատման հիմնական պատասխանատվությունը: Սույն ուսումնասիրության հեղինակներն են Անահիտ Դեմիրճյանը, Ծովինար Հարությունյանը, Վարդուհի Պետրոսյանը և Մայքլ Թոմփսոնը: Հարկ ենք համարում շնորհակալություն հայտնել նաև Հռիփսիմե Մարտիրոսյանին և Նունե Տուրյանին՝ ուսումնասիրության բոլոր փուլերում իրենց արժեքավոր մասնակցության համար, ինչպես նաև՝ մեր հարցազրուցավարներին (նպատակային մարզերի ԱՄՊ բժիշկներին)՝ տվյալների հավաքագրման գործում իրենց ցուցաբերած ջանքերի համար:

Վստահ ենք, որ այս ուսումնասիրության արդյունքներն արժեքավոր կլինեն ինչպես առավել տեղեկացված որոշումների կայացման միջոցով առողջապահական արդյունքների բարելավման, այնպես էլ՝ նոր ծրագրերի մշակման համար: Սույն հաշվետվությունն առկա է ԱՄԲ ծրագրի կայքում՝ [www.phcr.am](http://www.phcr.am): Դրա վերաբերյալ մեկնաբանությունները և հարցերը կարող եք ուղարկել [info@phcr.am](mailto:info@phcr.am) ինտերնետային հասցեով:

Ռիչարդ Ա. Յոդեր  
Ծրագրի ղեկավար, ԱՄԲ ծրագիր

# Բովանդակություն

Հապավումների ցանկ.....	iv
1. Ներածություն.....	1
2. Մեթոդներ.....	4
3. Արդյունքներ.....	5
3.1 Կառուցվածք, կարողություններ, անձնակազմ.....	6
3.2 Ընտանեկան բժշկություն.....	8
3.3 Ազատ հավաքագրում, ֆինանսավորում և կառավարում.....	12
3.4 Բնակչության ուսուցում.....	17
3.5 Ամենաանհրաժեշտ կարիքներ.....	21
Հավելված 1. ԱԱԴԲԾ բուժհաստատությունների գնահատման հարցաթերթիկ ....	22
Հավելված 2. Արագածոտնի, Արմավիրի և Արարատի մարզերի նպատակային բուժհաստատությունների անձնակազմի կառուցվածքը.....	36
Հավելված 3. Նպատակային բուժհաստատություններ. օգտագործվող սենյակների, սանհանգույցների թիվը, էլեկտրականության և խողովակաշարով ջրամատակարարման առկայությունը.....	39
Հավելված 4: Նպատակային բուժհաստատություններում առկա կահույքի քանակը.....	41
Հավելված 5. Սարքին սարքերի/մատակարարումների թիվը նպատակային հաստատություններում-1.....	44
Հավելված 7. 2007թ. և 2008թ. փետրվար-մարտ ամիսներին նպատակային բուժհաստատություններ կատարված այցերի թիվը.....	58
Հավելված 8. 2007թ. և 2008թ. փետրվար-մարտ ամիսներին նպատակային բուժհաստատությունների բուժաշխատողների կատարած տնային այցերի թիվը.....	61
Հավելված 9. Սպասարկվող բնակչության, տարեկան մահերի և հոսպիտալացումների թվերն ըստ հաստատությունների.....	64
Հավելված 10. Հղիությունների, ծննդաբերությունների, նորածնային մահերի տարեկան թվերը, ծննդաբերության վայրը և հաշմանդամների թիվը ըստ հաստատությունների (2006, 2007 թթ.).....	67
Հավելված 11. Այլ կազմակերպությունների հետ ԱԱԴ ծրագրի մասնակցած նպատակային բուժհաստատություններ.....	70
Հավելված 12. ԸԲ/ԸԲք ծառայություններ մատուցելու արտոնագրման կարգավիճակը և բուժաշխատողների թափուր տեղերն ըստ գնահատված բուժհաստատությունների.....	71

## Հապավումների ցանկ

ԱԱԻ	Առողջապահության ազգային ինստիտուտ
ԱԱՊ	Առողջության առաջնային պահպանում
ԱԱՊԲ	Առողջության առաջնային պահպանման բարեփոխումներ
ԱԲ	Ապացուցողական բժշկություն
ԱԾԻԳ	Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ
ԱԾՅԶԿ	Առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոն
ԱԿ	Առողջության կենտրոն
ԱՅԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՄԱՄ	Ամերիկյան միջազգային առողջապահական միություն
ԱՄԿՈՐ	Աջակցության միացյալ մեթոդիստական կոմիտե (անգլերեն անվանումից)
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱՍ	Ապագա սերունդ
ԲԱ	Բժշկական ամբուլատորիա
ԲԱՍ	Բժիշկներ առանց սահմանի
ԲԲՔ	Բազային բժշկական քուլեջ
ԲՅԻ	Բաց հասարակության ինստիտուտ
ԲՄԿ	Բուժակ – մանկաբարձական կետ
ԲԱ	Գյուղական բժշկական ամբուլատորիա
ԳԺԴԱՅԻ	Գերմանական ժողովուրդների դաշնակցության միջազգային համագործակցության ինստիտուտ
ԳՅ	Գլոբալ հիմնադրամ
ԳՄԿ	Գիտելիք, մոտեցում, վարվելակերպ
ԴԲՏՓԿ	Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն
ԴՈԹՍ	Ուղղակիորեն վերահսկվող կարճաժամկետ բուժում (անգլերեն անվանումից)
ԵԽՄԿ	Երեխայի խնամքի միջազգային կազմակերպություն
ԵՊԲՅ	Երևանի պետական բժշկական համալսարան
ԷՄԳ	«Էմերջինգ մարքեթս գրուփ»
ԸԲ	Ընտանեկան բժշկություն
ԸԲք	Ընտանեկան բուժքույրություն
ԸՊ	Ընդհանուր պրակտիկա
ԿՇՅ	Կենտրոնական շրջանային հիվանդանոց
ՀԱԿ	Համայնքային առողջապահական կոմիտե
ՀԱՅ	Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԲՈԻ	Հենակետային բժշկական ուսումնարան
ՀԾՓ	Հիմնական ծառայությունների փաթեթ
ՀԿԽՄ	Հայաստանի Կարմիր խաչի միություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՄ	Հազարամյակի մարտահրավերներ
ՀՄՅ	Հայաստանի մանուկների հիմնադրամ
ՀՄԲԾ	Հայաստանի սոցիալական բարեփոխումների ծրագիր
ՀՄԾ	Համաշխարհային սննդի ծրագիր
ՁԻԱՅ	Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՄԱԿ ՄՅ	Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ
ՄԳ	Մոնիթորինգ և գնահատում
ՄԻԱԿ	Մարդու իմունային անբավարարության վիրուս
ՄՅԻՎ	Մանկական հիվանդությունների ինտեգրված վարում
ՄՕԶ	Միջազգային օգնություն և զարգացում
ՆՕՎԱ	Նորարարություն և օժանդակություն վերարտադրողական առողջությանը
ՋՀ	Ջինիշյան հիմնադրամ
ՍԻՅ	Սրտի իշեմիկ հիվանդություն
ՍՇՅ	Սուր շնչառական հիվանդություններ
ՍՎ	Սեռավարակներ
ՎՎ	Վորլդ Վիժն

# 1. Ներածություն

## 1.1 ԱԱՊԲ ծրագրի մասին

Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալությունը (ԱՄՆ ՄԶԳ) հնգամյա պայմանագիր է կնքել «Էներջինգ մարքեթս գրուվ» (ԷՄԳ) միջազգային խորհրդատվական ընկերության հետ՝ Հայաստանում Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների (ԱԱՊԲ) ծրագիրն իրականացնելու նպատակով: Ծրագրի հիմնական նպատակն է բարձրացնել որակյալ առաջնային բուժօգնության ծառայությունների սպառումը բնակչության կողմից՝ Առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակի բուժհաստատությունները և ընտանեկան բժիշկների ու բուժքույրերի կարողությունները զորացնելու, ինչպես նաև՝ առողջական խնդիրների վերաբերյալ հանրության իրազեկվածությունը բարձրացնելու, բնակչության շրջանում բուժօգնության դիմելու գործելակերպը խրախուսելու և ԱԱՊ ծառայությունների պահանջարկը բարձրացնելու միջոցով: ԱԱՊԲ ծրագրի վեց հիմնական բաղադրիչներն իրականացվում են «ԻնտրաՅելթ Ինթերնեյշնլ» կազմակերպության, Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ), «Օվերսիգ Ստրաթիջիք Քնսալթինգ» ընկերության և «Սոչլ Սեկտրզ Դիվելփմենթ Ստրաթիջիք» կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում՝ ներառելով հետևյալ միջոցառումները.

- **Բարեփոխումների ընդլայնում.** օգնություն կառավարությանը՝ հետագա բարեփոխումների համար բարենպաստ իրավական դաշտ ստեղծելու հարցում, ԱԱՊ բուժհաստատությունների վերանորոգում և վերազինում, բուժհաստատությունների ղեկավարների համար վերապատրաստման դասընթացների մշակում և կազմակերպում
- **Ընտանեկան բժշկություն.** ժամանակակից ուսուցողական ծրագրերի և նյութերի մշակում շարունակական բժշկական կրթության համար, ընտանեկան բժշկության անկախ խմբային պրակտիկաների հիմնում, ընտանեկան բժիշկների և բուժքույրերի ուսուցում
- **Ազատ հավաքագրում.** ազատ հավաքագրման (բժշկի ազատ ընտրության) կարգի ներդրում Հայաստանի ԱԱՊ համակարգ՝ բուժաշխատողների մրցակցության միջոցով բուժսպասարկման բարելավման նպատակով
- **Բուժօգնության որակ.** բուժօգնության որակի բարձրացում որակի ժամանակակից ստանդարտների և որակի ապահովման գործընթացների ներդրման միջոցով, բուժաշխատողների արտոնագրման և բուժհաստատությունների հավատարմագրման կանոնակարգերի ներդրում
- **Առողջապահության ֆինանսավորում.** առողջապահությանը հատկացվող միջոցների բաշխման թափանցիկության և արդյունավետության բարձրացում ծառայությունների ինքնարժեքի հաշվարկի բարելավման և կատարողականի վրա հիմնված վարձատրության մեխանիզմների միջոցով, բուժհաստատությունների մակարդակում հաշվետվության գործընթացի բարելավում, Առողջապահության ազգային հաշիվների կիրառում
- **Բնակչության ուսուցում.** տրամադրվող ԱԱՊ ծառայությունների վերաբերյալ բնակչության իրազեկվածության բարձրացում, հասարակության կողմից ազատ հավաքագրման (բժշկի ազատ ընտրության) գործընթացի ըմբռնման և ընտանեկան բժշկության գաղափարի ընկալման ապահովում, առողջ

ապրելակերպի քարոզչություն և բուժօգնության դիմելու գործելակերպի խրախուսում:

Ծրագիրն իրականացվում է գոտիական ընդլայնման սկզբունքով, ինչը թույլ է տալիս ապահովել բարեփոխումների ընդլայնումը ողջ հանրապետության տարածքում ծրագրի գործունեության ընթացքում: Ծրագրի առաջնահերթ խնդիրն է յուրաքանչյուր գոտու ընտրված բուժհաստատությունների ֆիզիկական պայմանների և բուժօժանայությունների մատուցման բարելավումը: Ծրագրի նշանակետ են հանդիսանում Հայաստանի տարբեր մարզերի մոտ երեք հարյուր բուժհաստատություն: Ծրագրի 3-րդ գոտու նպատակային մարզերը հինգն են՝ Արագածոտնը, Արմավիրը, Արարատը, Վայոց Ձորը և Սյունիքը: Այս մարզերից առաջին երեքը (Արագածոտնը, Արմավիրը և Արարատը) ծրագրի երրորդ տարվա նպատակային մարզերն են և այսուհետև կկոչվեն 3-րդ գոտու առաջին փուլի մարզեր կամ 3-1 գոտի:

Նպատակային բուժհաստատություններում ծրագիրը բազմակողմանի միջոցառումներ է իրականացնում, այդ թվում՝

1. ԱԱՊ բուժհաստատությունների վերանորոգում,
2. հիմնական անհրաժեշտության կահույքի, բժշկական սարքավորումների և պարագաների տրամադրում,
3. գյուղական բուժքույրերի վերապատրաստում ընտանեկան և համայնքային բուժքույրության թեմաներով,
4. Համայնքային առողջապահական կոմիտեների (ՀԱԿ) հիմնում՝ գյուղական համայնքների անդամներին հիվանդությունների կանխարգելման և առողջության խթանման վերաբերյալ հանրակրթական տեղեկություններ տրամադրելու համար,
5. հանրակրթական նյութերի, այդ թվում՝ հեռուստատեսային և ռադիո գովազդի, պաստառների և թերթիկների տարածում՝ ԱԱՊ բարեփոխումների, ԱԱՊ ծառայությունների և որոշ առողջապահական խնդիրների վերաբերյալ բնակչության իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով,
6. վերադաս բուժհաստատությունների ղեկավարների վերապատրաստում ԱԱՊ բարեփոխումների, ռազմավարական պլանավորման, ֆինանսական և մարդկային ռեսուրսների կառավարման, աշխատանքային օրենսդրության և բուժօժանայությունների որակի ապահովման թեմաներով,
7. բուժհաստատությունների գլխավոր հաշվապահների և հաշվապահների վերապատրաստում՝ հաշվապահության ստանդարտների, ինքնարժեքի հաշվարկման, հարկային օրենսդրության, ինչպես նաև՝ համակարգչային հաշվապահական ծրագրերի կիրառման թեմաներով:

Ծրագրի՝ ողջ հանրապետության տարածքում ծավալված գործունեությունը ներառում է անցում ազատ հավաքագրման վրա հիմնված ԱԱՊ մոդելի և բուժհաստատությունների ֆինանսավորման կատարելագործում՝ ըստ կատարողականի վարձատրության և սպասարկվողների թվաքանակի վրա հիմնված ֆինանսավորման համակարգերի ներդրման միջոցով:

## 1.2 ԱԱՊԲ ծրագրի մոնիտորինգի և գնահատման պլան

Ծրագրի իրականացման մոնիտորինգի և ազդեցության գնահատման նպատակով իրականացվում են հետևյալ հետազոտությունները.

1) Ելակետային գնահատում, այդ թվում.

- Յուրաքանչյուր մարզի նպատակային բուժհաստատությունների նախածրագրային գնահատումներ, որոնք ներառում են. 1) բուժհաստատությանների կարողությունների գնահատում, որն անդրադառնում է ծրագրի բոլոր բաղադրիչների կառուցվածքային չափորոշիչներին, որոնցից մի քանիսը ծրագրի կատարողականի կառավարման պլանի չափորոշիչներ են, 2) բուժհաստատության և բուժաշխատողների կատարողականի գնահատում, որն անդրադառնում է բուժհաստատության և բուժաշխատողների գործունեությանը և կարող է հիմք հանդիսանալ բուժասարկման որակի փոփոխությունների գնահատման համար:
- Բնակչության հարցումներ, որոնք ներառում են. 1) սպասարկվողների գոհունակության հարցումներ, 2) սպասարկվողների գիտելիքների, մոտեցումների և վարվելակերպի (ԳՄՎ) հարցումներ ԱԱՊԲ ծրագրի կողմից հիմնված Համայնքային առողջապահական կոմիտեների միջոցով իրականացվող առողջապահական կրթության թեմաներով, 3) ՀՀ ողջ տարածքում իրականացվող ընտանիքների առողջապահական հարցում, որը ներառում է հարցվողների առողջական վիճակի և դրա փոփոխությունների ինքնագնահատումը, վաղ ախտորոշիչ և կանխարգելիչ ծառայություններից նրանց օգտվելու գործելակերպը, բուժօգնության հասանելիությունը և հարցվողների կողմից այդ օգնության որակի ընկալումը, մասնակցությունը ԱԱՊԲ ծրագրի իրականացրած միջոցառումներին և դրանց արժևորումը:

2) Միջանկյալ և վերջնական գնահատումներ, այդ թվում.

- Յուրաքանչյուր մարզի նպատակային բուժհաստատություններում ծրագրի աշխատանքների ավարտին կրկին կատարվում են վերոհիշյալ բոլոր գնահատումները:
- Ծրագրի աշխատանքների ավարտին իրականացվում են բնակչության կրկնակի հարցումներ նպատակային մարզերում (սպասարկվողների բավարարվածության և նրանց գիտելիքների, մոտեցումների և վարվելակերպի հարցումներ) և հանրապետության ողջ տարածքում (ընտանիքների առողջապահական հարցում), որոնք անդրադառնում են ելակետային գնահատման մեջ ընդգրկված բոլոր ոլորտներին:

Սույն հաշվետվությունն ամփոփում է Արագածոտնի, Արմավիրի և Արարատի մարզերի՝ ԱԱՊԲ ծրագրի երրորդ տարվա աշխատանքների համար ընտրված բոլոր բուժհաստատությունների կարողությունների գնահատման արդյունքները: Ելակետային այս գնահատման արդյունքում հավաքված տվյալները հիմք են հանդիսանում ներքին պլանավորման և ելակետային տվյալների համակարգ ստեղծելու համար՝ հետագայում 3-1 գոտում ծրագրի ազդեցության գնահատման նպատակով:



## 2. Մեթոդներ

Արագածոտնի, Արմավիրի և Արարատի (3-1 գոտի) մարզերում, որտեղ ծրագրի միջոցառումներն իրականացվում են 2008-2010թթ., նպատակային բուժհաստատությունների ընտրությունը կատարվել է համատեղ՝ ԱԱՊԲ ծրագրի աշխատակիցների և համապատասխան մարզերի առողջապահական վարչությունների կողմից: Ընտրված բուժհաստատություններում ԱԱՊԲ ծրագրի մոնիտորինգի և գնահատման (ՄԳ) թիմն իրականացրել է երկու տեսակի ելակետային գնահատում. բուժհաստատության կարողությունների և բուժհաստատության/բուժաշխատողի կատարողականի: Առաջինը ներառում է նպատակային բուժհաստատությունների մարդկային և նյութական կարողությունների (ռեսուրսների) գնահատումը: Ինչպես 2-րդ գոտու, այնպես էլ Արագածոտնի, Արմավիրի և Արարատի բոլոր տեսակի նպատակային բուժհաստատությունների (բուժակ-մանկաբարձական կետ՝ ԲՄԿ, բժշկական ամբուլատորիա՝ ԲԱ, առողջության կենտրոն՝ ԱԿ կամ պոլիկլինիկա՝ ՊԿ) կարողությունների գնահատման համար կիրառվել է նույն հարցաթերթիկը:

Բուժհաստատությունների կարողությունների գնահատման հարցաթերթիկը (հավելված 1) ընդգրկում է հետևյալ հիմնական ոլորտները.

- Բուժհաստատության վիճակը և կառուցվածքը, այն է՝ անձնակազմը, ենթակառուցվածքները, սենյակները, սարքավորումներն ու կահույքը, դեղամատակարարման աղբյուրները, վերանորոգման վիճակը, ջրամատակարարումը, էլեկտրականության առկայությունը և ջեռուցումը, հեռավորությունները և փոխադրամիջոցները
- Բուժհաստատության ունեցած կարողություններն ու հնարավորությունները ԱԱՊԲ ծրագրի գործունեության հիմնական ոլորտներում, այն է՝ ընտանեկան բժշկության, բուժօգնության որակի, ազատ հավաքագրման, կառավարման ու ֆինանսավորման, աշխատուժի պլանավորման ու բնակչության առողջապահական կրթության
- Սպասարկվող բնակչության որոշ հիմնական առողջապահական ցուցանիշներ:

Գնահատումների իրականացման նպատակով (և՛ բուժհաստատությունների կարողությունների, և՛ դրանց կատարողականի) յուրաքանչյուր նպատակային մարզում ՀԱՀ Առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոնի (ԱԾՀԶԿ) ՄԳ թիմի կողմից ուսուցանվել են երկուական հարցազրուցավար (բոլորը եղել են համապատասխան մարզերի բժիշկներ): Ուսուցումը տևել է 2 օր և ներառել ինչպես տեսական բաղադրիչ, այնպես էլ՝ հարցաշարի գործնական կիրառում:

Մարզերում վարձվել են տեղական փոխադրամիջոցներ՝ հարցում իրականացնողներին համապատասխան բուժհաստատություններ տանելու համար: Հարցումներն իրականացվել են մոտավորապես վեց շաբաթվա ընթացքում (սկսած 2008թ. ապրիլի կեսերից): ՄԳ թիմը բոլոր երեք մարզերում կատարել է հարցման գործընթացի ընտրողական ստուգումներ՝ հետազոտության ընթացակարգին հարցումների համապատասխանությունն ապահովելու համար:

ՀԱՀ ԱԾՀԶԿ տվյալներ մուտքագրող թիմը հավաքագրված տվյալները մուտքագրել է համակարգչային տվյալների բազա՝ օգտագործելով SPSS 11.0 ծրագիրը:

### 3. Արդյունքներ

3-1 գոտու մարզերում (3-րդ գոտում ընդգրկված 5 մարզերից 3-ում՝ Արագածոտնում, Արմավիրում և Արարատում) գնահատվել են ընդհանուր թվով 81 ԱԱՊ բուժհաստատություն (32-ը՝ Արագածոտնի, 26-ը՝ Արարատի և 23-ը՝ Արմավիրի մարզերում): Այդուսակ 1-ը ներկայացնում է ելակետային գնահատման մեջ ներառված նպատակային բուժհաստատությունների ցուցակը:

Այդուսակ 1. ԱԱՊԲ ծրագրի նպատակային բուժհաստատությունները 3-1 գոտում

Վերանորոգման ենթակա բուժ-հաստատություններ	Վերադաս բուժ-հաստատություններ	Վերանորոգման ենթակա բուժ-հաստատություններ	Վերադաս բուժ-հաստատություններ
<b>Արագածոտնի մարզ</b>		<b>Արարատի մարզ</b>	
<b>Ապարանի շրջան</b>		1. Լուսաշողի ԲՄԿ	15. Զանգակատան ԲԱ
1. Լուսազյուղի ԲՄԿ		2. Այգեպատի ԲՄԿ	16. Այգեստանի ԲԱ
2. Մուլքի ԲՄԿ		3. Բասրամյանի ԲՄԿ	17. Ազատավանի ԲԱ
3. Նիգավանի ԲՄԿ		4. Մասիսի ԲՄԿ	18. Բուրաստանի ԲԱ
4. Ծաղկաշենի ԲՄԿ	25. Արագածի ԱԿ	5. Բերքանուշի ԲՄԿ*	19. Դալարի ԲԱ
5. Վարդենուտի ԲՄԿ		6. Արաքսավանի ԲՄԿ	20. Դիմիտրովի ԲԱ
6. Ափնազյուղի ԲՄԿ	26. Շենավանի ԲԱ	7. Մրգանուշի ԲՄԿ	21. Գետազատի ԲԱ
7. Հարթավանի ԲՄԿ		8. Դիտակի ԲՄԿ	22. Ջրաշենի ԲԱ
<b>Արագածի շրջան</b>		9. Հեղտաշենի ԲՄԿ	23. Մխչյանի ԲԱ
8. Ալազյազի ԲՄԿ		10. Մրգավետի ԲՄԿ	
9. Բերքառատի ԲՄԿ		11. Հնաբերդի ԲՄԿ	24. Վ.Արտաշատի ԲԱ
10. Գեղարոտի ԲՄԿ		12. Նարեկի ԲՄԿ*	25. Քաղցրաշենի ԲԱ
11. Գեղաձորի ԲՄԿ		13. Նոր Կյուրիճի ԲՄԿ	26. Մարմարաշենի ԲԱ
12. Վարդաբլուրի ԲՄԿ		14. Վերին Դվինի ԲԱ	
13. Ծաղկահովտի ԲՄԿ	Ծաղկահովտի պոլիկլինիկա**	<b>Արմավիրի մարզ</b>	
14. Մելիքզյուղի ԲՄԿ§		1. Նորավանի ԲՄԿ	
15. Նորաշենի ԲՄԿ		2. Բերքաշատի ԲՄԿ	14. Գետաշենի ԲԱ
16. Ծիլքարի ԲՄԿ		3. Արգինայի ԲՄԿ	15. Քարակերտի ԲԱ
17. Լեռնապարի ԲՄԿ*		4. Շենիկի ԲՄԿ	16. Բաղրամյանի ԲԱ
<b>Աշտարակի շրջան</b>		5. Վանանդի ԲՄԿ*	17. Երվանդաշատի ԱԿ
18. Նոր Ամանոսի ԲՄԿ	27. Արուճի ԲԱ	6. Ծաղկալանջի ԲՄԿ	18. Արագածի ԲԱ
19. Ավանի ԲՄԿ	28. Կոշի ԲԱ	7. Այգեկի ԲՄԿ	19. Մերձավանի ԲԱ
20. Ղազարավանի ԲՄԿ	29. Փարպիի ԲԱ	8. Արևշատի ԲՄԿ	20. Մուսալեռի ԲԱ
21. Նոր Եղեսիայի ԲՄԿ	30. Ուջանի ԲԱ	9. Հեվտամեջի ԲՄԿ	21. Սամաղարի ԲԱ
22. Ոսկեհատի ԲՄԿ	31. Ոսկեվազի ԲԱ	10. Ծաղկունքի ԲՄԿ	22. Շահումյանի ԲԱ
<b>Թալինի շրջան</b>		11. Այգեշատի/Էջ. ԲՄԿ	
23. Ցամաքասարի ԲՄԿ		12. Հայկաշենի ԲՄԿ*	23. Գայի ԲԱ
24. Վ.Բազմաբերդի ԲՄԿ	32. Ն.Բազմաբերդի ԲԱ	13. Մեծամորի ԲՄԿ*	

\* Այս հաստատությունները կստանան սարքավորումներ և կահույք, սակայն չեն վերանորոգվի:

\*\* Ընտրվել է մակ որպես վերանորոգման հաստատություն:

§ Հանվել է վերանորոգման ենթակա հաստատությունների ցուցակից տվյալների հավաքումից և վերլուծությունից հետո:

Այս ցուցակը ներառում է ինչպես վերանորոգման համար ընտրված բուժհաստատությունները (n=51), այնպես էլ՝ դրանց անմիջականորեն վերահսկող (այսպես կոչված՝ վերադաս) հաստատությունները (n=30): Ինչևէ, վերանորոգման ենթակա որոշ բուժհաստատությունների (Լուսազյուղի, Մուլքի, Նիգավանի, Ցամաքասարի և Նորավանի ԲՄԿ-եր) վերադաս հաստատությունները (Ապարանի, Թալինի և Արմավիրի պոլիկլինիկաներ) չեն ներառվել ելակետային գնահատման

մեջ, քանի որ ենթակա են եղել վերակազմավորման՝ Առողջապահության նախարարության (ԱՆ) օպտիմալացման ծրագրի շրջանակներում:

### **3.1 Կառուցվածք, կարողություններ, անձնակազմ**

#### **Անձնակազմը**

Նպատակային 81 բուժհաստատություններում աշխատել են ընդհանուր թվով 80 բժիշկ, 204 բուժքույր, 35 մանկաբարձուհի/բուժակ, 35 սանիտար և 80 ոչ բժշկական անձնակազմ: Ընդհանուր պրակտիկայում (ընտանեկան բժշկության, թերապևտիկ և մանկաբուժական ծառայություններում) ներգրավված են եղել ընդհանուր թվով 255 բուժաշխատող, որոնցից 50-ը՝ ընտանեկան բժիշկ, 7-ը՝ թերապևտ, 6-ը՝ մանկաբույժ, 35-ը՝ մանկաբարձուհի/բուժակ, 93-ը՝ տեղամասային բուժքույր և 64-ը՝ ընտանեկան բուժքույր: ԲՄԿ-երի մեծ մասի (49-ից 34-ի կամ 69.4%-ի) անձնակազմը բաղկացած է եղել ընդամենը մեկ բուժքրոջից կամ մանկաբարձուհուց: Նպատակային բուժհաստատությունների անձնակազմերը մանրամասնորեն ներկայացված են հավելված 2-ում:

#### **Բուժհաստատության սեփականության իրավունքը**

3-1 գոտում ծրագրի նշանակետ հանդիսացող 49 ԲՄԿ-ից միայն մեկն է եղել իր բուժհաստատության սեփականատերը (Նորաշենի ԲՄԿ-ը Արագածոտնի մարզում): ԲՄԿ-երի մեծ մասը վարձակալել են իրենց տարածքը (43-ը կամ 87.8%-ը), որպես կանոն, գյուղապետարանից, կամ էլ ընդհանրապես տարածք չեն ունեցել (5-ը կամ 10.2%-ը, այն է՝ Վերին Բազմաբերդի, Վարդաբլուրի, Լեռնապարի ԲՄԿ-երը Արագածոտնի մարզում, և Յայկաշենի ու Նորավանի ԲՄԿ-երը Արմավիրի մարզում): ԲԱ-ների և ԱԿ-ների մեծ մասը նույնպես վարձակալել են իրենց տարածքը (ԲԱ-ների 82.1%-ը (23-ը) և ԱԿ-ների 75%-ը (3-ը)):

#### **Սենյակները**

Գնահատված 49 ԲՄԿ-երից 5-ը (10.2%-ը) չեն ունեցել օգտագործվող սենյակներ, իսկ 30-ը (61.2%-ը) ունեցել են միայն մեկ օգտագործվող սենյակ: Միայն երկու ԲՄԿ են ունեցել 2-ից ավելի օգտագործվող սենյակներ (Վանանդի և Շենիկի ԲՄԿ-երը Արմավիրի մարզում) (հավելված 3): Օգտագործվող սենյակների միջին թիվը կազմել է 1.3՝ ԲՄԿ-երում (0-4 տատանման տիրույթով) և 5.7՝ ամբուլատորիաներում (2-14 տատանման տիրույթով): Սենյակների (օգտագործվող և չօգտագործվող) ընդհանուր թիվն ըստ հաստատության տեսակի տատանվել է ԲՄԿ-երում 0-ից 10-ի սահմաններում (միջինը՝ 1.59), իսկ ամբուլատորիաներում՝ 3-ից 16-ի (միջինը՝ 7.0): Գնահատված ԲՄԿ-երից 40-ում հիմնական/զննման սենյակները վերանորոգված չեն եղել: Միայն 4 ԲՄԿ-ում է օգտագործվող սենյակների վերանորոգման վիճակը գնահատվել բավարար հարցազրուցավարի կողմից: Գնահատված ԲՄԿ-երից 39-ում (79.6%-ում) հիմնական/զննման սենյակների լուսավորությունը գնահատվել է բավարար: ԲՄԿ-երի հիմնական/զննման սենյակի միջին մակերեսը կազմել է 17.7 մ<sup>2</sup>: 6-70 մ<sup>2</sup> տատանման տիրույթով: Մյուս սենյակները (եթե այդպիսիք եղել են) ավելի փոքր են եղել և դրանց միջին մակերեսը կազմել է 13.0 մ<sup>2</sup>:

28 առողջության կենտրոնների (ԱԿ) 157 գնահատված սենյակներից 97-ում (61.8%) վերանորոգման վիճակը գնահատվել է բավարար, մինչդեռ բնական լուսավորությունը բավարար է գնահատվել 147-ում (93.6%-ում):

Ամբուլատորիաների սենյակների միջին մակերեսը կազմել է 16.6 մ<sup>2</sup> 4-60 մ<sup>2</sup> տատանման տիրույթով:

ԱԿ-ներում տեղեկություններ են հավաքվել միայն ընդհանուր պրակտիկայում (ԸՊ) օգտագործվող կաբինետների/սենյակների մասին, ներառյալ ընտանեկան բժիշկների, թերապևտների, ընդհանուր պրակտիկայի բժիշկների և մանկաբույժների կաբինետները: Չորս ԱԿ-ներում գնահատվել են ընդամենը 11 ԸՊ կաբինետ, որոնցից 10-ը բաղկացած են եղել մեկ սենյակից, մեկը՝ երկու սենյակից: ԱԿ-ներում ԸՊ կաբինետների միջին թիվը կազմել է 2.8՝ 1-ից 5 տատանման տիրույթով: Կաբինետների վերանորոգման վիճակը գնահատվել է բավարար 5 կաբինետում (45.5%-ում), իսկ լուսավորությունը բավարար է գնահատվել բոլոր կաբինետներում: Ջննման սենյակների միջին մակերեսը ԱԿ-ներում եղել է 16.6 մ<sup>2</sup> (9-24 մ<sup>2</sup> տատանման տիրույթով):

### **Էլեկտրամատակարարումը, ջեռուցումը**

Որոշակի տարածք ունեցող 44 ԲՄԿ-ից շուրջօրյա էլեկտրամատակարարում եղել է միայն 29-ում (65.9%): Տասնչորս ԲՄԿ (31.8%) ընդհանրապես զրկված են եղել էլեկտրամատակարարումից, իսկ մեկն ունեցել է միայն մասնակի (4-ժամյա) էլեկտրամատակարարում: Բոլոր ԲԱ-ները և ԱԿ-ներն ունեցել են շուրջօրյա էլեկտրամատակարարում (հավելված 3):

Գնահատված ԲՄԿ-երի կեսից ավելին (25-ը կամ 56.8%-ը) օգտագործել են շարժական էլեկտրական ջեռուցիչներ իրենց սենյակները տաքացնելու համար: Ծխնելույզով վառարաններ (փայտի վառարաններ) օգտագործվել են 4 ԲՄԿ-ում, իսկ 15 ԲՄԿ (34.1%) ընդհանրապես չեն ջեռուցվել: Վերջիններս ձմռան ցուրտ ամիսներին բուժօգնություն տրամադրել են բուժաշխատողի տանը, կամ էլ ընդհանրապես դադարեցրել են աշխատանքը: Շարժական էլեկտրական ջեռուցիչները եղել են ամենատարածված ջեռուցման միջոցը վերադաս բուժհաստատություններում. 11 ԲԱ և 3 ԱԿ օգտագործել են ջեռուցման այս միջոցը: Հաջորդ ամենատարածված ջեռուցման միջոցը եղել է ծխնելույզով վառարանը, որն օգտագործվել է 8 ԲԱ-ում և մեկ ԱԿ-ում: Միայն 3 ԲԱ է օգտագործել ներկառուցված տեմ և 2 ԲԱ ունեցել է կենտրոնացված ջեռուցում:

### **Ջրամատակարարում, սանհանգույց (զուգարան)**

Որոշակի տարածք ունեցող 44 ԲՄԿ-ից (5-ն ընդհանրապես տարածք չեն ունեցել) 43-ը չեն ունեցել խողովակաշարով ջրամատակարարում, իսկ խողովակաշարով ջրամատակարարում ունեցող միակ ԲՄԿ-ը (Արարատի մարզի Հնաբերդի ԲՄԿ-ը) ունեցել է սահմանափակ տևողությամբ ջրամատակարարում (օրական 5 ժամ): Այս տեսանկյունից իրավիճակը մի փոքր ավելի լավ է եղել վերադաս բուժհաստատություններում. 16 ԲԱ (57.1%) և 2 ԱԿ (50.0%) ունեցել են խողովակաշարով ջրամատակարարում, թեև շուրջօրյա ջրամատակարարում եղել է միայն 5 ԲԱ-ում (17.9%) և մեկ ԱԿ-ում: Խողովակաշարով ջրամատակարարում ունեցող ունեցող ԲԱ-ներում և ԱԿ-ներում ջրամատակարարման միջին տևողությունը եղել է 11.1 ժամ/օր՝ 1-24 ժամ/օր տատանման տիրույթով:

Թեև ԲՄԿ ունեցող 3 գյուղերում եղել է կոյուղի (Արագածոտնի մարզի Ոսկեհատ, Արարատի մարզի Նոր Կյուրին և Արմավիրի մարզի Այգեշատ գյուղերում), ԲՄԿ-ը կոյուղուն միացած է եղել է միայն 1 գյուղում (Նոր Կյուրին): 28 ԲԱ-ներից կոյուղի ունեցել են միայն 14-ը (50.0%): Բոլոր չորս ԱԿ-ներն ունեցել են կոյուղի:

Բուժհաստատության ներսում սանհանգույց/զուգարան ունեցող 3 ԲՄԿ-երից միայն մեկում է այն գործել (Արարատի մարզի Նոր Կյուրինի ԲՄԿ-ում):

Տասնհինգ ԲԱ (53.6%) և երկու ԱԿ (50.0%) բուժհաստատության ներսում ունեցել են սանհանգույց/զուգարան, սակայն այն գործել է միայն 11 ԲԱ-ում և մեկ ԱԿ-ում (հոսող ջուր եղել է միայն 9-ում): Գործող, առանց զուգարանակոնքի սանհանգույցներ եղել են միայն մեկ ԲՄԿ-ում, 5 ԲԱ-ում և 2 ԱԿ-ում (հավելված 3):

Բնահատված բոլոր բուժհաստատություններից միայն երկու ԲԱ-ում է եղել ցնցուղ (Ներքին Բազմաբերդի ԲԱ-ն Արագածոտնի մարզում և Այգեստանի ԲԱ-ն Արարատի մարզում), սակայն այն գործել է միայն մեկ ԲԱ-ում (Ներքին Բազմաբերդի ԲԱ-ն Արագածոտնի մարզում):

### **Կահույքը և սարքավորումները**

Առկա սարքավորումների և դրանց պիտանիության մասին մանրամասն տեղեկություններ են հավաքվել բոլոր գնահատված բուժհաստատություններից: Դրանք ամփոփված են հավելված 4-ում և հավելված 5-ում: Ներկայացված ամփոփ տեղեկություններում ներառվել են միայն օգտագործման համար պիտանի սարքավորումները: Ինչպես երևում է աղյուսակներից, գրեթե բոլոր բուժհաստատություններն ունեցել են կահավորման և սարքավորումներով հագեցվածության անբավարար մակարդակ: ԲՄԿ-երի վիճակն այս առումով եղել է ամենածանրը:

## **3.2 Ընտանեկան բժշկություն**

**ԸԲ/ԸԲք վերապատրաստում.** ԱԱՊԲ ծրագրի 3-1 գոտում գնահատված 81 նպատակային բուժհաստատությունների բոլոր ԱԱՊ բժիշկներից (n=63) 48-ը (76.2%) անցած 5 տարվա ընթացքում վերապատրաստվել են ԱԱԻ/ԵՊԲԳ-ում, 3-ն (4.8%) ընդգրկված են եղել ընտանեկան բժշկության (ԸԲ) շարունակական կրթության դասընթացներում, իսկ 5-ը (7.9%) ցանկություն են հայտնել ընդգրկվելու այդ դասընթացներում: Նպատակային հաստատություններում աշխատող ԱԱՊ 192 բուժքույրերից 69-ը (35.9%) անցած հինգ տարվա ընթացքում վերապատրաստվել է ԱԱԻ-ում կամ ԲԲԲ-ում, 12-ը (6.3%) ընդգրկված են եղել ընտանեկան բուժքույրության (ԸԲք) շարունակական կրթական ծրագրում և 92-ը (47.9%) ցանկություն են հայտնել մասնակցել դրան (հավելված 6):

Գնահատված հաստատությունների բուժաշխատողներին հարց է տրվել, թե արդյո՞ք իրենք 2000թ. ի վեր մասնակցել են հետևյալ թեմաներով կարճաժամկետ կլինիկական վերապատրաստման դասընթացների՝ առաջին բուժօգնություն, իմունիզացիա, կրծքով սնուցում, սեռավարակներ (ՍԿ), վերարտադրողական առողջություն, մանկական հիվանդությունների ինտեգրված վարում (ՄՅԻՎ), պալարախտ (տուբերկուլյոզ), առողջ ապրելակերպ, առողջ երեխայի աճ և զարգացում: Այս թեմաներն ընտրվել են, քանի որ դրանք վերջին տարիների ընթացքում գտնվել են տարբեր կազմակերպությունների ուշադրության կենտրոնում և բազմիցս ուսուցանվել բուժաշխատողներին: Տեղեկություններ են հավաքվել նաև քրոնիկական վիճակների վարման (ՍԻՅ, դիաբետ, քրոնիկ ցավ և այլն) և վարակների կանխարգելման դասընթացների վերաբերյալ, քանի որ ԱԱՊԲ ծրագիրը նախատեսել է անցկացնել վերապատրաստման դասընթացներ այս թեմաներով: Աղյուսակ 2-ում ներկայացված են 2000թ. ի վեր վերը նշված թեմաներով վերապատրաստում անցած բուժաշխատողների թվերն ըստ բուժաշխատողի մասնագիտության և վերապատրաստման թեմայի, ինչպես նաև թվարկված են այդ վերապատրաստումների հիմնական կազմակերպողները:

Ըստ թեմաների, բժիշկների և բուժքույրերի մասնակցությունը կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներին եղել է միանման: Ընդհանուր առմամբ, բուժանձնակազմի ընդգրկվածությունն այս դասընթացներով ավելի բարձր է եղել 3-1 (Արմավիր, Արագածոտն, Արարատ), քան 2-րդ գոտու (Կոտայք, Գեղարքունիք, Տավուշ) մարզերում:

**Աղյուսակ 2. 3-1 գոտու նպատակային բուժաստատությունների բժիշկների և բուժքույրերի կարճատև վերապատրաստման դասընթացները՝ ըստ թեմաների**

	Դասընթացի թեմա	Բժիշկներ (n=63)		Բուժքույրեր (n=192)		Իրականացնող կազմակերպություններ
		n	%	n	%	
1	Իմունիզացիա	41	65.1%	107	55.7%	ՄԱԿ ՄՅ, ԱՆ
2	ՄՅԻՎ	33	52.4%	82	42.7%	ՄԱԿ ՄՅ, ԱՄԿՈՐ, ԱՆ
3	Աչքի հիվանդություններ	24	38.1%	71	37.0%	ԱՄՆ ՄԶԳ, Հայաստանի ակնաբուժական ծրագիր
4	Առաջին բուժօգնություն	20	31.7%	34	17.7%	Կարմիր Խաչ, ՀՄՅ, ԱՄՆ ՄԶԳ, ԱՆ
5	Կրծքով կերակրում	17	27.0%	34	17.7%	ՄԱԿ ՄՅ, ԱՆ, ՆՕՎԱ
6	Սեռավարակներ	10	15.9%	8	4.2%	ԱՄՆ ՄԶԳ, ՆՕՎԱ
7	Վերարտադրողական առողջություն	6	9.5%	13	6.8%	ԱՆ, ՀՄՅ, ԱՄԿՈՐ
8	Առողջ ապրելակերպ	5	7.9%	14	7.3%	ՀՄՅ, ՆՕՎԱ
9	Առողջ երեխայի աճ և զարգացում	5	7.9%	11	5.7%	ՀՄՅ, Ամերիբեբես, ՄԱԿ ՄՅ
10	Պալարախտ (տուբերկուլյոզ)	1	1.6%	3	1.6%	Տուբերկուլյոզի ազգային ծրագիր, ԱՄԿՈՐ
11	Վարակների կանխարգելում	0	0.0%	7	3.6%	ՀԱՀ, ՀՄՅ, ԱՆ, ԱՄԿՈՐ
12	Քրոնիկական վիճակների վարում	0	0.0%	2	1.0%	ՀՄՅ

**Կլինիկական գործունեության ուղեցույցներ.** Համաշխարհային բանկի կողմից բուժքույրերի համար կազմված կլինիկական գործունեության ուղեցույցների ողջ փաթեթն (7 հատոր) ուներ մեկ բուժքույր Բերքաշատի ԲՄԿ-ում (Արմավիրի մարզ): Երկու ԲՄԿ-ում (Հնաբերդի ԲՄԿ-ը Արարատի մարզում և Շենիկի ԲՄԿ-ն Արմավիրի մարզում) կար այդ ուղեցույցների ոչ ամբողջական փաթեթ (4 հատոր և 1 հատոր՝ համապատասխանաբար): Բժիշկների համար կազմված կլինիկական գործունեության ուղեցույցների ողջ փաթեթի (17 հատոր) առնվազն մեկ օրինակ առկա էր 31 ԲԱ-ում և 3 ԱԿ-ում: Մնացած վերադաս հաստատություններում կար դրանց ոչ ամբողջական փաթեթ, իսկ 7 այսպիսի հաստատություններում չկար բուժքույրերի համար կազմված կլինիկական գործունեության և ոչ մի ուղեցույց: Բուժաշխատողների թվերը՝ ըստ հաստատության տեսակի և ուղեցույցի անձնական օրինակի առկայության, տրված են աղյուսակ 3-ում:

**Աղյուսակ 3. 3-1 գոտու նպատակային բուժհաստատություններում ՀԲ-ի կլինիկական գործունեության ուղեցույցներ ունեցող բուժաշխատողների թվերը և տոկոսները՝ ըստ բուժհաստատության տեսակի**

	Բժիշկներ		Բուժքույրեր	
	Ընդհանուր թիվը	Ուղեցույց ունեցողների %-ը	Ընդհանուր թիվը	Ուղեցույց ունեցողների %-ը
ԲՄԿ	0	-	65	4.6
ԲԱ	51	70.6	112	27.7
ԱԿ	12	58.3	15	40.0
<b>Ընդամենը</b>	<b>63</b>	<b>68.3</b>	<b>192</b>	<b>20.8</b>

Գնահատված բուժհաստատություններում առկա այլ կլինիկական գործունեության ուղեցույցների թվում հաճախ նշվել են կարճաժամկետ վերապատրաստման տարբեր դասընթացների ժամանակ բաշխված տպագիր նյութեր: Այդ նյութերի թեմաները հիմնականում կրկնում կամ լրացնում են ՀԲ-ի ուղեցույցները (օրինակ՝ իմունիզացիա, ՄՅԻՎ, ՍՇՀ, փորլուծություն, կրծքով սնուցում, վերարտադրողական առողջություն/ընտանիքի պլանավորում):

Աղյուսակ 4-ում ամփոփ ներկայացված է տեղեկատվություն նպատակային բուժհաստատություններում ապացուցողական բժշկության (ԱԲ) և դեղերի վերաբերյալ տեղեկատվական աղբյուրներից օգտվելու հնարավորության մասին: Շատ բուժհաստատություններ հնարավորություն են ունեցել օգտվելու վերջերս տպագրված բժշկական գրքերից, որոշ վերապատրաստման նյութերից և բժշկական պարբերականներից: Միայն մեկ բուժհաստատություն (Արագածի ԱԿ-ը Արմավիրի մարզում) ունեցել է ինտերնետից օգտվելու հնարավորություն: Դեղերի մասին տեղեկատվական աղբյուրներից օգտվելու հնարավորությունը նույնպես եղել է սահմանափակ՝ հատկապես ԲՄԿ-երում: Դեղերի մասին տեղեկատվության առավել տարածված աղբյուրներն են եղել Մաշկովսկու «Դեղամիջոցներ» և Վիդալի «Դեղերի ուղեցույց Անդրկովկասի համար» հրատարակությունները:

**Աղյուսակ 4. ԱԲ նյութերից և դեղերի վերաբերյալ տեղեկատվական աղբյուրներից օգտվելու հնարավորությունը**

	ԲՄԿ (n=49) n (%)	ԲԱ (n=28) n (%)	ԱԿ (n=4) n (%)
<b>ԱԲ աղբյուրներ</b>			
Ինտերնետ	0	0	1 (25.0%)
Բժշկական ամսագրեր	1 (2.0%)	10 (35.7%)	0
Վերապատրաստման թարմ նյութեր	4 (8.2%)	10 (35.7%)	0
Պարբերականներ	1 (2.0%)	4 (14.3%)	2 (50.0%)
ԱԲ հրատարակություններ	0	4 (14.3%)	1 (25.0%)
Բժշկական գրքեր (2000թ. ի վեր հրատարակված)	0	20 (71.4%)	2 (50.0%)
<b>Դեղերի վերաբերյալ տեղեկատվական աղբյուրներ</b>			
Մաշկովսկի, «Դեղամիջոցներ»	1 (2.0%)	17 (60.7%)	2 (50.0%)
Վիդալ, «Դեղերի ուղեցույց»	0	11 (39.3%)	1 (25.0%)
Վիդալ, «Դեղերի ուղեցույց Անդրկովկասի համար»	0	26 (92.9%)	4 (100.0%)
Դեղաբուժության օպտիմալ սխեմաների ձեռնարկ, ՀՀ ԱՆ ԴԲՏԳ	0	7 (25.0%)	0
Հայկական ազգային ֆորմուլյար	0	11 (39.3%)	2 (50.0%)

**Քարտավարություն.** Գնահատված բուժհաստատությունների 96.3%-ը վարել են մինչև 18 տարեկանների բժշկական քարտեր: Երեք ԲՄԿ չեն վարել այդպիսի քարտեր: Մինչև 18 տարեկան տարիքային խմբի 94.0%-ը (ստանդարտ շեղումը<sup>‡</sup> 14.3%) ընդգրկված են եղել քարտերով: Դրանցում գրանցված տեղեկությունները գնահատվել են «լիարժեք» գնահատված հաստատությունների 58.2%-ում, ընդ որում՝ ԲՄԿ-երի 42.6%-ում, ամբուլատորիաների 82.1%-ում և ԱԿ-ների 75.0%-ում: Գնահատված հաստատությունների 87.2%-ը (ԲՄԿ-երի 89.1%-ը, ԲԱ-ների 85.7%-ը, ԱԿ-ների 87.2%-ը) կիրառել է ստանդարտ ձևի բժշկական քարտեր:

Մեծահասակ ( $\geq 18$  տարեկան) բնակչության համար բժշկական քարտեր լրացվել են գնահատված ԲՄԿ-երի 42.9%-ում, ամբուլատորիաների 100%-ում, և ԱԿ-ների 75.0%-ում: Մեծահասակ բնակչության ընդգրկվածությունը քարտերով եղել է 45.8% (ստանդարտ շեղումը՝ 37.7%), որը ավելի քան երկու անգամ պակաս է մինչև 18 տարեկանների ընդգրկվածության ցուցանիշից: ԱԿ-ներում և ԲԱ-ներում մեծահասակների միջին ընդգրկվածությունը քարտերով կազմել է 75.8% (ստանդարտ շեղումը՝ 19.6%), մինչդեռ ԲՄԿ-երում՝ 26.2% (ստանդարտ շեղումը՝ 33.6%): Քարտերում գրանցված տեղեկությունները գնահատվել են որպես «լիարժեք» այդ քարտերն օգտագործող հաստատությունների 38.5%-ում (ԲՄԿ-երի 23.8%-ում, ԲԱ-ների 46.7%-ում և ԱԿ-ների 66.7%-ում): Մեծահասակների քարտեր վարող ԲՄԿ-երի 81.0%-ը, ամբուլատորիաների 89.3%-ը և ԱԿ-ների 66.7%-ը կիրառել են բժշկական քարտերի ստանդարտ ձևեր:

49 ԲՄԿ-երից 42-ը (85.7%) վարել են ամբուլատոր այցերի մատյաններ, իսկ 23-ը (46.9%)՝ տնային այցերի մատյաններ: Ամբուլատոր այցերի մատյաններում գրանցված տեղեկությունները գնահատվել են որպես «լիարժեք» 24 ԲՄԿ-ում (57.1%), իսկ տնային այցերի մատյաններում գրանցումները՝ 11 ԲՄԿ-ում (45.8%): Բոլոր գնահատված ԱԿ-ները և ամբուլատորիաները վարել են ամբուլատոր և տնային այցերի մատյաններ, բացի մեկից, որը չի ունեցել տնային այցերի մատյան: Ամբուլատոր այցերի մատյաններում գրանցված տեղեկությունները գնահատվել են որպես «լիարժեք» 24 ամբուլատորիայում (85.7%) և 2 ԱԿ-ում (50.0%): Տնային այցերի մատյանները գնահատվել են որպես «լիարժեք» 22 ամբուլատորիայում (81.5%) և 2 ԱԿ-ում (50.0%):

Պատվաստման ձևերն առկա են եղել գնահատված բոլոր ԲԱ-ներում, ԱԿ-ներում և 46 ԲՄԿ-ում (93.9%): Այս ձևերում գրանցված տեղեկությունները գնահատվել են որպես «լիարժեք» 42 ԲՄԿ-ում (91.3%) և բոլոր ԲԱ-ներում ու ԱԿ-ներում: Բոլոր բուժհաստատությունները կիրառել են պատվաստման ստանդարտ ձևեր: Այս ձևերով համապատասխան բնակչության ընդգրկվածությունը եղել է 97.0% ԲՄԿ-երում և գրեթե 100.0% ԲԱ-ներում և ԱԿ-ներում:

ԲՄԿ-երից և ոչ մեկը, 5 ԲԱ (17.9%) և 3 ԱԿ (75.0%) վարել են շտապ օգնության կանչերի մատյաններ: Դրանցում պարունակվող տեղեկությունները գնահատվել են որպես «լիարժեք» այդ մատյանները վարող բոլոր բուժհաստատություններում:

Միայն 11 ԲՄԿ-ում (22.4%) են եղել հղիների հսկողության քարտեր: Ինչ վերաբերում է վերադաս բուժհաստատություններին, ապա 25 ԲԱ (89.3%) և բոլոր

<sup>‡</sup> *Ստանդարտ շեղումը* դա վիճակագրական ցուցանիշ է, որը նկարագրում է դիտարկված տվյալների միջին հեռավորությունը տվյալների կենտրոնից: Երբ դիտարկված տվյալների ցուցանիշները չափազանց մոտ են իրար և զանգականման կորագիծը նեղ է, ստանդարտ շեղումը փոքր է: Երբ դիտարկված ցուցանիշները ցրված են (գտնվում են իրարից հեռու) և զանգականման կորագիծը համեմատաբար տափակ է, դա նշանակում է, որ ստանդարտ շեղումը համեմատաբար մեծ է:



չորս ԱԿ-ները վարել են այդպիսի քարտեր: Դրանցում պարունակվող տեղեկությունները գնահատվել են որպես «լիարժեք» 9 ԲՄԿ-ում (81.8%), 24 ԲԱ-ում (96.0%) և բոլոր ԱԿ-ներում: Այդ քարտերը վարող բուժհաստատությունները նշել են հղիների 99.0% ընդգրկվածություն:

Գնահատված որևէ հաստատությունում չի եղել որակի ապահովման գործող մեխանիզմ: Միայն մեկը՝ Քարակերտի ԲԱ-ն է նշել որակի ապահովման գործող մեխանիզմի առկայության մասին և նկարագրել է այն որպես «համակարգչով բժշկական քարտերի լրացում»:

Անցած երեք ամիսների ընթացքում վերահսկողները միջինում 4.2 (ստանդարտ շեղումը՝ 5.4) վերահսկողական այց են կատարել ԲՄԿ: Ինչևէ, 12 ԲՄԿ (25.0%) նշել են, որ իրենց բուժհաստատություն վերահսկողական այցեր չեն կատարվել անցած եռամսյակի ընթացքում, իսկ ևս 12 ԲՄԿ (25.0%) նշել են, որ այդ ժամանակահատվածում եղել է միայն մեկ վերահսկողական այց: 28 ԲԱ-ից 18-ը նշել են, որ իրենց բուժհաստատությունը անմիջականորեն վերահսկվում է դրսից: Այս հաստատություններ կատարված վերահսկողական այցերի միջին թիվը վերջին եռամսյակում կազմել է 0.7 (ստանդարտ շեղումը՝ 0.8):

ԲՄԿ-երից ոչ մեկում չի եղել համակարգիչ, մինչդեռ 32 ԲԱ և ԱԿ նշել են, որ ունեն առնվազն մեկ համակարգիչ: Բուժհաստատություններից ոչ մեկը չի ունեցել համակարգչային ծրագիր կլինիկական տվյալների մուտքագրման և վերլուծության համար: Կլինիկական դասավանդողներ եղել են երեք ԲԱ-ում (մեկական՝ յուրաքանչյուրում):

### **3.3 Ազատ հավաքագրում, ֆինանսավորում և կառավարում**

Գնահատված բոլոր ԲԱ-ները և ԱԿ-ներն ունեին համակարգչային ծրագիր ազատ հավաքագրման համար, որը տրամադրել էր ԱՄՆ ՄԶԳ/ԱԱՊԲ ծրագիրը: Բոլոր բուժհաստատությունները, բացի մեկից (Բաղրանյանի ԲԱ-ն Արարատի մարզում) ունեին ազատ հավաքագրման համար վերապատրաստված մեկ կամ երկու օպերատոր: Հարցագրույցի պահին ազատ հավաքագրմամբ գրանցված մարդկանց գումարային թիվը 117998 էր (այս թիվը չի ներառում Արագածոտնի մարզի Փարպիի ԲԱ-ի տվյալները, որոնք բացակայում էին), որը կազմում է այս հաստատությունների կողմից սպասարկվող բնակչության 93.2%-ը:

Հարցաթերթիկի «Ֆինանսավորում և կառավարում» բաժնում ներառված հարցերը վերաբերում էին միայն այն բուժհաստատություններին, որոնք ունեն անկախ իրավաբանական անձի կարգավիճակ: Թեև երեք ԲԿ (Արագածի ԲԿ-ն Արմավիրի մարզում, Ջրաշենի և Ազատավանի ԲԿ-ները Արարատի մարզում) հայտնել են, որ իրենք չունեն այդպիսի կարգավիճակ, բոլոր գնահատված 28 ԲԿ-ներն ու 4 ԱԿ-ները պատասխանել են այս հարցերին: Երեք ամբուլատորիա (Դալարը՝ Արարատի, Արագածը և Քարակերտը՝ Արմավիրի մարզերում) և մեկ ԱԿ (Երվանդաշատը Արմավիրի մարզում) նշել են, որ պարբերաբար հաշվարկում են իրենց հաստատությունում մատուցվող ծառայությունների միավորի ինքնարժեքը, և ևս մեկ ԱԿ (Գայի ԱԿ-ն Արմավիրի մարզում) նշել է, որ այդպիսի հաշվարկ կատարում է երբեմն: Մնացած 27 բուժհաստատություններում (84.4%) մատուցվող ծառայությունների միավորի ինքնարժեքի հաշվարկ չի կատարվում այն պատճառով, որ, ըստ պատասխանողների, Պետական Առողջապահական Գործակալությունն (ՊԱԳ) է կատարում այդ հաշվարկը: Արագածոտնի մարզի երկու հաստատություն (Ներքին Բազմաբերդի ԲԱ-ն և Արագածի ԱԿ-ն) նշել են, որ օգտագործում են հաշվապահական հաշվառման սեփական համակարգչային ծրագիր: Ներքին Բազմաբերդի ԲԱ-ն հաշվապահական հաշվառման իր համակարգչային ծրագիրը ստացել է ՊԱԳ-ից: Բուժհաստատությունների

ղեկավարների ճնշող մեծամասնությունը (90.6%) նպատակահարմար է համարել հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի ներդրումն իրենց հաստատություններում:

Բոլոր ԱԿ-ներն ու ԲԱ-ների 75.0%-ն ունեցել են որակավորված հաշվապահ՝ հաշվապահական կրթությամբ: Յոթ ԲԱ-ում հաշվապահը չի ունեցել հաշվապահական կրթություն: Այդուսակ 5-ում ամփոփ ներկայացված են տվյալներ գնահատված վերադաս հաստատությունների հաշվապահների ստացած վերապատրաստումների մասին անցած 5 տարվա ընթացքում և նրանց հետագա ուսուցման կարիքների մասին: Իրականացված վերապատրաստումների հիմնական կազմակերպիչների շարքում նշվել են Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակը (ԱԾԻԳ), ՊԱԳ-ը, ֆինանսների նախարարությունը, և աուդիտային ծառայությունը: Նշված հիմնական մասնագիտական ասպարեզներում վերապատրաստում ստացած հաշվապահների մասնաբաժինը եղել է ցածր, ինչը փաստում է հետագա վերապատրաստումների անհրաժեշտությունն այդ ոլորտներում:

**Այդուսակ 5. 3-1 գոտու հաշվապահների վերապատրաստումները վերջին 5 տարվա ընթացքում և հետագա ուսուցման կարիքները (ԲԱ-ներ և ԱԿ-ներ, n=32)**

	Վերապատրաստված հաշվապահներ		Վերապատրաստման միջին տևողությունը (շաբաթ)		Հետագա ուսուցման կարիք ունեցողներ	
	n	%	միջին	ս <sub>2</sub>	n	%
1. Ֆինանսական կառավարում	4	12.5	2.1	1.3	26	83.9
2. Ինքնարժեքի հաշվառում	5	15.6	2.4	1.1	24	77.4
3. Ֆինանսական հաշվառում	4	12.5	2.8	1.3	25	80.6
4. Համակարգչային ուսուցում	5	15.6	4.0	1.4	22	71.0
5. Հարկային օրենսդրություն	3	9.4	3.5	0.7	25	80.6
6. Աշխատանք. օրենսդրություն	2	6.3	3.5	0.7	24	77.4

Այդուսակ 6-ում ներկայացված են տեղեկություններ ամբուլատորիաների և ԱԿ-ների տնօրենների անցած վերապատրաստման դասընթացների մասին (ԱՄՆ ՄԶԳ/ԱՄՊԲ ծրագիրն է եղել այս դասընթացների հիմնական իրականացնողը), որոնք պարզորոշ ցույց են տալիս լրացուցիչ վերապատրաստումների կարիքը:

**Այդուսակ 6. 3-1 գոտու տնօրենների վերապատրաստումները վերջին 5 տարվա ընթացքում և հետագա ուսուցման կարիքները (ԲԱ-ներ և ԱԿ-ներ, n=32)**

	Վերապատրաստված տնօրեններ		Վերապատրաստման միջին տևողությունը (շաբաթ)		Հետագա ուսուցման կարիք ունեցողներ	
	n	%	միջին	ս <sub>2</sub>	n	%
1. Առողջապահության կառավարում	6	18.8	1.8	1.2	29	90.6
2. Առողջապահության տնտեսագիտություն	1	3.1	1.0		30	93.8
3. Ֆինանսական կառավարում	4	12.5	1.1	0.9	29	90.6
4. Ինքնարժեքի հաշվառում	0	0.0	0		27	84.4
5. Հաշվապահության հիմունքներ	1	3.1	1.0		28	87.5
6. Հարկային օրենսդրություն	2	6.3	1.0		28	87.5
7. Աշխատանքային օրենսդրություն	1	3.1	1.0		29	90.6
8. Համակարգչային ուսուցում	2	6.3	1.0		28	87.5

Տասնչորս ԲԱ (50.0%) նշել են, որ կատարում են եկամուտների հաշվառում ըստ բժշկական ստորաբաժանումների, իսկ 23 ԲԱ (82.1%)՝ որ կատարում են ծախսերի հաշվառում ըստ բժշկական ստորաբաժանումների: Չորս ԱԿ-ներից ոչ մեկը չի նշել, որ կատարում է եկամուտների կամ ծախսերի հաշվառում ըստ բժշկական ստորաբաժանումների:

**Աշխատուժի պլանավորում**

2007թ. և 2008թ. փետրվար և մարտ ամիսներին նպատակային բուժհաստատություններ կատարված ամբուլատոր այցերի և բուժաշխատողների տնային այցերի թվերը ներկայացված են հավելվածներ 7-ում և 8-ում համապատասխանաբար: Հաշվարկվել են գնահատված հաստատություններ կատարված ամբուլատոր այցերի և բուժաշխատողների կատարած տնային այցերի՝ մեկ սպասարկվողին ընկնող տարեկան միջին ցուցանիշները 2007 և 2008 թթ. համար (2008թ. համար ստացված ցուցանիշները ենթադրական են՝ հիմնված 2008թ. փետրվար և մարտ ամիսների ամբուլատոր և տնային այցերի թվերի վրա): Այս ցուցանիշները համեմատվել են ըստ բուժհաստատության տեսակների և մարզերի: Մեկ սպասարկվողին ընկնող ամբուլատոր այցերի միջին տարեկան թվերը (1.1՝ 2007թ. և 1.2՝ 2008թ.) հավաստիորեն ավելի բարձր են եղել, քան տնային այցերի համապատասխան ցուցանիշները (0.3՝ 2007թ. և 0.5՝ 2008թ.): Թե՛ ամբուլատոր, թե՛ տնային այցերի ցուցանիշները հավաստիորեն աճել են 2008թ.՝ 2007թ. համեմատությամբ (ինչևէ, 2008թ. ցուցանիշները ենթադրական են): Ամբուլատոր այցերի ցուցանիշներն ավելի բարձր են եղել ԱԿ-ներում և ԲԱ-ներում, քան՝ ԲՄԿ-երում: Տնային այցերի ցուցանիշները գրեթե միանման են եղել բոլոր տեսակի բուժհաստատություններում: Ամբուլատոր այցերն ավելի հաճախակի են եղել Արմավիրի մարզում, քան՝ Արագածոտնի և Արարատի մարզերում (աղյուսակ 7):

**Աղյուսակ 7. Մեկ սպասարկվողին ընկնող ամբուլատոր և տնային այցերի միջին թվերն ըստ բուժհաստատության տեսակների և մարզերի, 2007 և 2008 (ենթադրական)**

	Ամբուլատոր այցեր		Տնային այցեր	
	2007 միջին (սշ)*	2008 միջին (սշ)	2007 միջին (սշ)	2008 միջին (սշ)
<b>Հաստատության տեսակ</b>				
ԲՄԿ	0.7 (0.5)	0.9 (0.5)	0.3 (0.3)	0.5 (0.5)
ԲԱ	1.7 (0.8)	1.7 (1.1)	0.3 (0.1)	0.4 (0.2)
ԱԿ	1.6 (1.0)	1.5 (0.8)	0.7 (0.9)	0.6 (0.4)
<b>Մարզ</b>				
Արագածոտն	0.8 (0.7)	1.0 (0.8)	0.3 (0.4)	0.5 (0.5)
Արմավիր	1.5 (0.9)	1.7 (0.9)	0.5 (0.4)	0.6 (0.4)
Արարատ	1.0 (0.7)	1.0 (0.6)	0.3 (0.1)	0.4 (0.2)
<b>Ընդամենը (ողջ ընտրանքում)</b>	<b>1.1 (0.8)</b>	<b>1.2 (0.9)</b>	<b>0.3 (0.3)</b>	<b>0.5 (0.4)</b>

\* ստանդարտ շեղում

**Սպասարկվող բնակչություն<sup>1</sup>**

Տեղեկություններ են հավաքվել յուրաքանչյուր նպատակային բուժհաստատության կողմից սպասարկվող մանկական և մեծահասակ բնակչության թվերի, ինչպես նաև՝ նրանց մի քանի կարևոր առողջական և առողջապահական ցուցանիշների վերաբերյալ, ինչպիսիք են տարեկան մահերը (այդ թվում՝ մանկական և մայրական), հոսպիտալացումները, հղիությունների, հասուն և անհաս կենդանածինների և նորածնային մահերի թվերը, ծննդաբերությունների վայրը (տուն, ԱԱՊ բուժհաստատություն, ծննդատուն), ինչպես նաև՝ հաշմանդամների թիվը սպասարկվող բնակչության շրջանում: Բոլոր այս տվյալներն ըստ բուժհաստատությունների ներկայացված են հավելված 9-ում և 10-ում: Այս տվյալների հիման վրա յուրաքանչյուր բուժհաստատության կողմից սպասարկվող բնակչության համար հաշվարկվել է ընդհանուր մահացության ցուցանիշ՝ 1000 սպասարկվող բնակչի հաշվով: Այնուհետև այս ցուցանիշի միջինները համեմատվել են ըստ մարզերի և բուժհաստատության տեսակների: 3-1 գոտու նպատակային բուժհաստատությունների կողմից սպասարկվող բնակչության ընդհանուր մահացության ցուցանիշը 2006թ. կազմել է 7.55՝ 1000 բնակչի հաշվով, իսկ 2007թ.՝ 7.75: Սպասարկվող բնակչությունների ընդհանուր մահացության ցուցանիշների միջինները հավաստիորեն չեն տարբերվել ըստ բուժհաստատության տեսակների, մինչդեռ ըստ մարզերի համեմատությունը բացահայտել է հավաստիորեն բարձր ցուցանիշ Արագածոտնի մարզում (աղյուսակ 8):

**Աղյուսակ 8. Նպատակային վայրերում ընդհանուր մահացության միջին ցուցանիշները 1000 սպասարկվող բնակչի հաշվով՝ ըստ բուժհաստատության տեսակների և մարզերի, 2006 և 2007թթ.**

	2006 միջին (սշ)	2007 միջին (սշ)
<b>Հաստատության տեսակ</b>		
ԲՄԿ	6.8 (3.6)	7.2 (3.7)
Ամբուլատորիա	8.6 (5.6)	8.8 (5.7)
ԱԿ	7.4 (3.9)	5.5 (2.5)
<b>Մարզ *</b>		
Արագածոտն	9.3 (5.5)	9.6 (5.6)
Արարատ	6.7 (3.3)	6.8 (2.6)
Արմավիր	5.8 (3.0)	5.9 (3.5)

\* Մարզերի միջև տարբերությունը վիճակագրորեն հավաստի է ( $p < 0.05$ ):

3-1 գոտու նպատակային բուժհաստատությունների կողմից սպասարկվող բնակչության շրջանում ընդհանուր մահացության միջին ցուցանիշը կազմել է 8.3՝ 1000

<sup>1</sup> Այս ենթավերնագրում ներկայացված տվյալների վերլուծության արդյունքների ընտրանքից դուրս ընդհանրացմանը պետք է վերաբերվել զգուշորեն, քանի որ գնահատված հաստատություններն ընտրվել են ոչ պատահականորեն

† p-արժեքը վիճակագրական հավաստիության չափման միավոր է, որը ներկայացնում է հետազոտված խմբերի միջև գոյություն ունեցող տարբերության պատահական լինելու հավանականությունը: Արդյունքի ցանկացած տարբերության համար ցածր p-արժեքը ցույց է տալիս, թե որքան ցածր է հավանականությունը, որ այդ տարբերությունը պատահականության հետևանք է: p-արժեքի ցածր ցուցանիշով արդյունքները համարվում են վիճակագրորեն հավաստի: Օրինակ՝ 0,01 p-արժեքը ( $p = 0,01$ ) նշանակում է, որ ստացված արդյունքների պատահական լինելու հավանականությունը 100-ից 1 է: Նմանատիպ հետազոտություններում ցանկալի է, որ p-արժեքը լինի 0,05 կամ ավելի ցածր:

կենդանածնի հաշվով 2006թ. և 5.5՝ 2007թ.: Նորածնային մահերը կազմել են մանկական մահերի 25.0%-ը 2006թ. և 66.7%-ը՝ 2007թ.: Գնահատված բուժհաստատություններում գրանցվել է մեկ մայրական մահացության դեպք 2006թ. և ոչ մի դեպք 2007թ.:

Հոսպիտալացումների գրանցված դեպքերի ընդհանուր թիվը 2006թ. համեմատությամբ 2007թ. ավելացել է 18.0%-ով՝ 2003 դեպքից դառնալով 2364 դեպք: Հոսպիտալացումների ընդհանուր ցուցանիշը 1000 սպասարկվող բնակչի հաշվով 2006թ. կազմել է 15.7, իսկ 2007թ.՝ 18.5: Աղյուսակ 9-ում համեմատվել են 1000 սպասարկվող բնակչի հաշվով հոսպիտալացումների միջին ցուցանիշներն ըստ բուժհաստատության տեսակների և մարզերի: Ամենաբարձր ցուցանիշը նկատվել է առողջության կենտրոններում, իսկ ամենացածրը՝ ԲՄԿ-երում (թեև տվյալի հաղորդման հետ կապված սխալը այստեղ կարող է զգալի լինել, քանի որ հոսպիտալացումների մասին տվյալները հաճախ բացակայել են ԲՄԿ-երում): Հոսպիտալացումների միջին թիվը հավաստիորեն ավելի բարձր է եղել Արագածոտնի մարզում:

**Աղյուսակ 9. Նպատակային վայրերում հոսպիտալացումների միջին ընդհանուր ցուցանիշները 1000 սպասարկվող բնակչի հաշվով՝ ըստ հաստատության տեսակների և մարզերի, 2006 և 2007թթ.**

	2006		2007	
	միջին (սշ)		միջին (սշ)	
<b>Հաստատության տեսակ*</b>				
ԲՄԿ	13.1	(15.2)	14.6	(16.8)
Ամբուլատորիա	18.5	(13.1)	17.5	(10.0)
ԱԿ	30.5	(30.6)	44.8	(54.9)
<b>Մարզ*</b>				
Արագածոտն	20.8	(20.0)	22.9	(26.9)
Արարատ	16.3	(13.5)	15.7	(10.3)
Արմավիր	8.5	(6.7)	10.5	(7.5)

\* Հաստատության տեսակների/մարզերի միջև տարբերությունը վիճակագրորեն հավաստի է ( $p < 0.05$ ):

Ծնելիության ընդհանուր ցուցանիշը (ծնունդների թիվը 1000 սպասարկվող բնակչի հաշվով) նպատակային տարածքում 2006թ. կազմել է 11.4, իսկ 2007թ.՝ 12.9: Բոլոր ծնունդների մեջ անհաս կենդանածնիների տեսակարար կշիռը եղել է ցածր՝ 2.3%՝ 2006թ. և 3.4%՝ 2007թ.: Աղյուսակ 10-ում ներկայացված են ծնելիության միջին ցուցանիշներն՝ ըստ բուժհաստատությունների տեսակների և մարզերի: Մարզերի և բուժհաստատությունների միջև այս ցուցանիշի վիճակագրորեն հավաստի տարբերություններ չեն նկատվել:

**Աղյուսակ 10. Նպատակային վայրերում ծնելիության միջին ցուցանիշները սպասարկվող 1000 բնակչի հաշվով՝ ըստ հաստատության տեսակների և մարզերի, 2006 և 2007 թթ.**

	2006		2007	
	միջին (սշ)		միջին (սշ)	
<b>Հաստատության տեսակ</b>				
ԲՄԿ	11.3	(4.7)	12.5	(5.8)
Ամբուլատորիա	11.4	(3.9)	13.0	(4.7)
ԱԿ	14.6	(8.8)	15.0	(7.6)
<b>Մարզ</b>				
Արագածոտն	12.1	(4.8)	13.1	(6.1)
Արարատ	10.7	(3.6)	12.1	(4.7)
Արմավիր	11.5	(5.4)	13.1	(5.5)
<b>Ընդամենը</b>	<b>11.5</b>	<b>(4.7)</b>	<b>12.7</b>	<b>(5.5)</b>

Ծննդաբերությունների վերաբերյալ ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ դրանց գերակշռող մեծամասնությունը (99.7%-ը ինչպես 2006թ., այնպես էլ՝ 2007թ.) տեղի է ունեցել ծննդատներում: Ոչ մի ծննդաբերություն տեղի չի ունեցել ԱԱՊ բուժհաստատություններում: Տնային ծննդաբերությունները կազմել են միայն 0.25% (4 դեպք 2006թ. և 5 դեպք 2007թ.):

Նպատակային բուժհաստատությունների կողմից սպասարկվող բնակչության շրջանում հաշմանդամների ընդհանուր թիվը կազմել է 3259, իսկ հաշմանդամության ցուցանիշը 1000 սպասարկվող բնակչի հաշվով՝ 25.5: Աղյուսակ 11-ում ներկայացված են հաշմանդամության միջին ցուցանիշներն ըստ բուժհաստատության տեսակների և մարզերի: Վերջիններիս միջև այս ցուցանիշի վիճակագրորեն հավաստի տարբերություններ չեն նկատվել:

**Աղյուսակ 11. Հաշմանդամության միջին ցուցանիշները (1000 սպասարկվող բնակչի հաշվով)՝ ըստ բուժհաստատության տեսակների և մարզերի**

	Հաշմանդամության միջին ցուցանիշը 1000 սպասարկվող բնակչի հաշվով	
	Միջին	Ստանդարտ շեղում
<b>Հաստատության տեսակ</b>		
ԲՄԿ	20.8	11.2
Անբուլատորիա	26.4	16.9
ԱԿ	33.7	22.2
<b>Մարզ</b>		
Արագածոտն	24.2	13.7
Արարատ	25.2	16.5
Արմավիր	20.3	12.3

**3.4 Բնակչության ուսուցում**

